ԻՆՔ ՄԱՍԱՆՑ ԱՆԱՊԱՏԸ ԸՍՏ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԻ

Պատմական Հայաստանի Արցախ նահանգը, որի կենտրոնական գավառներից մեկը միջնադարից հայտնի էր Ջրարերդ անվամբ, հարուստ է պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններով։ Գավառի կենտրոնական մասում են գտնվում մինչև այժմ գոյություն ունեցող երկու գյուղեր՝ Կուբատպատ (Կսապատ) և Մոխրաթաղ (այժմ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտի շրջանում)։ Այս գյուղերն իրարից բաժանված են անտառածածկ բլրաշարքերով և ոչ մեծ մի գետակով, որ հոսում է Մելիք-Իսրայելյանների կառուցած բերդ-ապարանքի մոտով և մոտ 500 մետր անց ձախից ընդունում մի մեծ վտակ, ստեղծելով գեղեցիկ հրվանդան՝ շրջապատված անտառախիտ խոր ձորերով։ Միայն արևմտյան կողմից տեղանքը հրնարավորություն ունի հաղորդակցվելու շրջակայքի հետ։ Ահա այդ վայելուչ կանաչ հարթակի վրա հնուց ի վեր եղել է եկեղեցի, որից այժմ



Նկ. 1

գրեթե ոչինչ չի պահպանվել։ Եկեղեցուց քիչ հյուսիս-արևմուտք կանգուն է Ինը Մասանց անապատ կամ Ինը Մասունք եկեղեցին (նկ. 1), որը հիմնովին վերանորոգվել է 1881 թ.։ Եկեղեցու հյուսիսային նակատին, ներսում պահպանվել է հետևյալ արձանագրությունը.

Ի 1881 ԱՄԻ ՇԻՆԵՑԱԻ ՍՈՒՐԲ ՈՒԽՏՍ ԻՆՆ ՄԱՍԱՆՑ ՏՐՈՔ ԺՈՂՈՎՐԴՈՑ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅԻՎՍԵՓ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՓԻՆԱՋԵԱՆՑ։

Ավագ խորանի հյուսիսային կողմում կա մեկ այլ շինարարական արձանագրություն.

ՇԻՆԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԻՆՆ ՄԱՍԱՆՑ ՍԵՂԱՆՆ ՀԱՍՏՈՒԻՍ ՍՀԱՐ ԽԱՆՈՒՄԻՆ ՎԱՄՆ ՀԱՆԴՈՒՑԵԱԼ ՅԱՐՈՒԹՈՒՆ ԲԵԳ ԱԲԱԲԵԿԵԱՆԻ ԿՈՒՍԱՊԱՏ ԳԵՂՋ 1884 ԱՄԻ։

1881 թ. որոշ ուսումնասիրողների կողմից նրկատավել է որպես եկեղեցու կառուցման թվական[1]։ Սակայն մեր կողմից տեղում կատարված ուսումնասիրության շնորհիվ գտնվեցին մի քանի մինչ այժմ չընթերցված արձանագրություններ, որոնց միջոցով բացահայտվեցին տեղի միջնադարյան գերեզմանոցի, եկեղեցու և վերջինիս հետագա վերանորոգումների ժամանակագրական մի շարք հարցեր։ Այսպես, Ինն Մասանց անապատի տարածքից թվակիր ամենահին հուշարձանը եկեղեցուց արևմուտք գտնվող մի տապանաքար է, որի վրա կա 1662 թ. արձանագրություն[2].

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱԵԱՄԻՆ ԹՎ ՌՃԺԱ։ (1662 թ.)։

Մեկ ուրիշի վրա՝

ԱՅՍ Է ՀԱՆԴԻՍՏ ԽՈՃԱՅ ԵՎՐԻՆ ԹՎ ՌՃԿԹ։ (1720 թ.)։

Սակայն անմիջապես եկեղեցու մուտքի հարավային կողմի ամենաստորին շարվածքի անկյու-

---

1 Ս. Բարխուտարյանց. Արցախ. Բագու, 1895, էջ 216—217։

2 Դիվան հայ վիմագրության, կազմեց Ս. Գ. Խարխուդարյան. պրակ 5, Երևան, 1982, էջ 94։

նային քանդակազարդ քարերից մեկի վրա կա 1605 թ. արձանագրություն.

ԱՅՍ ԳԻՐՍ ԳՐԵՑԱՒ
ՏՐ ՄԿՏՐՏԻՉՍ։
ԹՎ(ԻՆ) ՌՃԴ ԷՐ։



Նկ. 2

Արձանագրության երկրորդ տողում Մկրտիչ անվան առաջին m տառը անկասկած գրչի սխալ է։ Պարզ է, որ այժմյան եկեղեցին վերակառուցվել է կիսավեր հին եկեղեցու պատերի հիմքերի վրա 1881 թ.։ Հուշարձանն ունի միանավ թաղածածկ բազիլիկի հորինվածք, չունի ավանդատներ, արևելքում ավագ խորանն է. XIX դարում, վերջին վերանորոգման ժամանակ, այնտեղից բացել են մեծ չափի պահարանման խորշեր, որ հավանաբար ծառայել են որպես գրապահոցներ, հարավային ճակատին բացել են լայն լուսամուտներ, մեկական լուսամուտներ կան արևելյան և արևմտյան ճակատներում (նկ. 2)։ Ճանիքը հողապատ երկթեք ծածկ ունի, որտեղ տեղադրված են եղել տարբեր չափերի կարասներ՝ թաղի թեթևացման նպատակով։ Դրանցից ոչ մեկը այժմ ամբողջական չէ։ Եկեղեցին կառուցված է կոպտատաշ և անմշակ քարերով ու երաշտախով։ Սրբատաշ են մուտքի անկյունաքարերը և կոնստրուկտիվ առավել պատասխանատու սասերը՝ թաղակիր կամարն ու բոմնասյունները։ Եկեղեցու արևելյան և արևմտյան ճակատներին արտաքինից տեղադրված է մեկական մեծ գեղաքանդակ խաչքար (առանց արձանագրության), որոնց զարդամոտիվներն ու ընդհանուր ոճը բնորոշ են XII—XIII դարերին։ Այս թվագրումը հաստատվում է եկեղեցու հյուսիսային պատի վերին մասում, ներսից ագուցված մի նմանատիպ խաչքարի վրա (խաչի ստորին մասում) եղած արձանագրությամբ.

ՈՂԳ (1244 թ.) ԷՐ։ ԵՍ ՀԱՍ
[ԱՆ] . . . . . [ԿԱՆ] ԳՆԵՑԻ ՁԽԱՁՍ

Այս և մյուս երկու խաչքարերը խիստ ընդհանրություն ունեն անդամ առանձին մանրամասներում. երեք խաչքարերն էլ խաչի վերին մասում զարդարված են նոան քանդակներով։ Հուշարձանի շրջակայքում այլ խաչքարեր չեն պահպանվել և պարզ է, որ փրկվել են նրանք, որոնք տեղադրված են եղել հուշարձանի պատերի մեջ տարբեր տեղերում։ Այսպիսով ապացուցվում է նաև տեղում միջնադարյան գերեզմանոցի առկայության իրողությունը, որտեղ եղել է նաև մի փոքր եկեղեցի (հավանաբար մատուռ), որն այժմ հիմնահատակ կործանված է, բայց որը անցյալ դարի վերջին տեսել է Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցը[3] ավերակ վիճակում։

Արձանագրություններից հետաքրքիր է եկեղեցու բարավորի վրա վիմագրվածը, ուր կարդացվում է ՇԼԱ (1082) թվականը և եկեղեցու անունը.

...ՆԻԿԱՐՈՅ ՍԲ
...ԻՆԻՆՆ ՄԱՍԱՆՑՍ
ԵԿ(Ե)Ղ(Ե)Ց(Ի)ՔՍ ...Շ։ԼԱ ԴԱՏ...

Անապատի[4] շրջակայքում փռված է մեծ գերեզմանոց, ուր կան մինչև XX դարի սկզբի տապանաքարեր, որ ապացույց է Հին Մոխրաթաղ գյուղի գոյության մինչև այդ ժամանակները։ Գյուղատեղին տարածվում է անապատից հյուսիս-արևմուտք, ոչ շատ հեռու։ Այդտեղով է անցել հին կարևոր ճանապարհներից մեկը, որ Կուսապատը կապել է Հոռոթաղ, Մոխրաթաղ, Մարտակերտ ու այլ գյուղերի ու բնակավայրերի հետ։

Ա. Ա. ՔԵՐՈԲՅԱՆ

---

3 Մ. Բարխուտարյանց. Նշվ. աշխ., էջ 216։

4 Հուշարձանի չափագրությունները կատարել են Վ. Զարյանը, Ս. Կարապետյանը և Ա. Քերոբյանը։